

**Պ.ՊՈՈՇՅԱՆԻ «ՀԱՅԻ ԽՆԴԻՐ» ՎԵՊԸ ՈՐՊԵՍ
ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ***

Աներկբա է, որ «Հացի խնդիր» վեպը Պերժ Պոռշյանի գլուխգործոցն է և այսօր էլ այդ երկի տպագրությունից (1880թ.) 138 տարի անց արդիական հնչեղություն ունի, և դրա գաղտնիքը Միկիտան Սաքոյի տիպական կերպարի առկայությունն է, որը մարդկության համար հավերժական տիպական երևույթ է և նույնիսկ կապ էլ չունի ազգային պատկանելության իրողության հետ:

Պերժ Պոռշյանի վիպագրության վրա մեծ ազդեցություն են թողել հայ իրականության երկու հզոր ու լուսավոր անհատներ՝ Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանի» վեպով և երկրորդը՝ Միքայել Նալբանդյանը՝ Պոռշյանի երախայրիքին՝ «Սոս և Վարդիթերին», ուղղված ծավալուն ու հանգամանալից քննադատությամբ:

Սեզանում՝ հատկապես XIX դարում, հայոց վեպը նյութը քաղում էր գյուղական կյանքից: Պատահական չէր, որ Աբովյանն իր վեպի գլխավոր հերոս ընտրեց հասարակ գյուղացի Աղասուն և ոչ թե նույն վեպում գործող Մադաթովին, որն անշուշտ որպես անհատականություն ձևավորվել էր կրթված քաղաքային միջավայրում:

Թե ինչու մեր առաջին վեպերը ներկայացրին Հայաստանի գյուղական կյանքը, պատասխանում է, իհարկե ոչ ուղղակի իմաստով, մեծ հայագետ Նիկողայոս Մառը Բագրատունիների շրջանի Հայաստանի Անի մայրաքաղաքին նվիրված հետազոտության մեջ. «Անին համենայնդեպս ավելի հարազատ ու մոտիկ էր հին հայկական կենսակերպին՝ իր ազնվական բնույթով ու դասային հիմքերով. քան թե Ժողովրդի հետագա դիմագծին, երբ քաղաքական լրիվ անկումը և մահմեդականների կողմից շարունակական հալածանքները համա-հարթեցրին հայերին մեկ դասի մեջ»:¹

* Հղվածն ընդունվել է տպագրության 10.01.2019:

1 Н.Я.Марр, Ани столица древней Армении (историко-археологический набросок), Москва, 1898, с.199.

Այս է պատճառը, որ և՛ Աբովյանը, և նրա գործը շարունակող Պերձ Պոռոշյանը իրենց վեպերում պատկերեցին հայ գյուղն ու գյուղացուն: Թե՛ Աբովյանը և թե՛ Պ. Պոռոշյանը իրենց վեպերում լայն տեղ հատկացրին հայ ժողովրդական բանահյուսությանը: Դա բնական անհրաժեշտություն էր. հատկապես Գարեգին Սրվանձտյանցի բանահյուսական ժողովածուներից հետո հայ գրականության մեջ ուժեղանում է բանահյուսական նյութերի օգտագործումը: Նշանավոր բանագետ Արամ Ղանալանյանը դեռ երիտասարդ տարիներից հետազոտել է մի խումբ հայ գրողների երկերի և հայ ժողովրդական բանահյուսության նյութերի առնչությունները և դրանք զետեղել առանձին ուսումնասիրությունների մեջ: Այդ գրողներն են՝ Սայաթ-Նովա², Խ. Աբովյան³, Պ. Պոռոշյան⁴, Հ. Թումանյան⁵, Ավ. Իսահակյան⁶:

Ինչպես պարզ նկատվում է, Պերձ Պոռոշյանը հենց առաջին հայ գրողն է, որի ստեղծագործության և ժողովրդական բանահյուսության կապի մասին գրել է բանագետը: Նա գրել է Պոռոշյանի բոլոր վեպերի մասին և «Հացի խնդիր» վեպի առիթով չի առանձնացրել գրողի օգտագործած բոլոր ժանրերը:

Պերձ Պոռոշյանի ստեղծագործությանը անդրադարձել են շատերը: XX դարի երկրորդ կեսին գրողի ստեղծագործությանը ծավալուն մեկնագրություն է նվիրել պրոֆեսոր Արշալույս Բաբայանը⁷, տարբեր առիթներով Պ. Պոռոշյանի ստեղծագործությունը հանգամանալի վերլուծել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Սարինյանը⁸, «Հայ դասականների գրադարան» մատենաշարի Պերձ Պոռոշյանին նվիրված հատորի առաջաբանը գրել է պրոֆեսոր Կառլեն Դանիելյանը⁹:

2 Ա. Ղանալանյան, Սայաթ-Նովայի ստեղծագործության ակունքները, Երևան, 1963:

3 Ա. Ղանալանյան, Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941:

4 Ա. Ղանալանյան, Պոռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1938:

5 Ա. Ղանալանյան, Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը (տե՛ս Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, I, Երևան, 1964, էջ 26-45):

6 Ա. Ղանալանյան, Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, 1963:

7 Ա. Բաբայան, Պերձ Պոռոշյան, Երևան, 1962:

8 Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. III, Երևան, 1964, էջ 227-269, Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Երևան, 2002, էջ 155-196:

9 Տե՛ս Պ. Պոռոշյան, Երկեր, Երևան, 1984, էջ 3-22:

Բոլոր գրականագետները համերաշխորեն առանձնացնում են «Հացի խնդիր» վեպի ձանաչողական արժեքն ու տիպաբանական գյուտերը:

Սերգեյ Սարինյանն ունի հետևյալ դիպուկ ու խորիմաստ նկատումը. «Չի գիտակցվում մի սկզբունքային հանգամանք, որ Պոռշյանի նկարագրած նահապետական համայնքն ամբողջապես սուզված է միֆոլոգիայի ոլորտը, և կյանքը կառուցված է **բանահյուսության օրենքներով**, այսինքն՝ սոցիալական իրականությունն ինքը բանահյուսությունն է: Այստեղ է կայանում վեպի գեղարվեստական միասնությունը, սյուժեի, կերպարների, բարքերի ու հասկացությունների ներքին համաչափությունը»¹⁰:

Ցավոք, Միքայել Նալբանդյանը չկարողացավ տեսնել Պերձ Պոռշյանի՝ որպես գրողի ստեղծագործական աճը: «Կրիտիկա.Սոս և Վարդիթեր» քննության մեջ նա գրում է. «Արդեն ասած ենք, որ Սոս և Վարդիթերի տկար կողմերը այն տեղերում են, ուր հեղինակը, դուրս գալով բնականի սահմանից, օգնություն է խնդրում երևակայությունից»¹¹: Իհարկե, Նալբանդյանը գիտեր, որ առանց երևակայության ոչ մի իսկական գեղարվեստական գործ չի ծնվում ո՛չ գրականության և ո՛չ էլ արվեստի մյուս տեսակներում: Սակայն երևակայությունը չպետք է կորցնի համոզիչ լինելու հատկությունը, այլապես այն կկորցնի իր արժեքը:

Երկրորդ ցանկությունը, որ հայտնում էր Նալբանդյանը իր կրիտիկայում, բանահյուսության նյութերի ճիշտ օգտագործումն էր, իսկ երրորդը՝ գյուղի սոցիալական խնդիրներին անդրադառնալը: «Սոս և Վարդիթեր» վեպում քննադատը ամենից շատ հավանել է գիշերային այն տեսարանը, երբ օդի քաշելիս Վայկունը խոսում է գյուղացու տնտեսական ծանր վիճակի մասին. «Դառը բողբջ լսվում է Վայկունի բերնից. «Մեր գեղի ամեն բանն էլ լա՛վ ա, ափա՛ս, որ քեթխուդեքն ու տանուտերը մի քիչ շահասեր են. էս ինչ ա, հիմի խարջ են կիտում, ես մի խեղճ մարդ եմ, նրանք ինչ-որ ինձ կհասներ խարջը տալու, էրկու էնքան են առել...: Տխրություն է գալիս մեր վրա, երբ հիշում ենք, թե հարստահարված երկրագործը կամ շինականը բռնադատված է լուռ մնալ իր հարստահարողների ընդդեմ և միայն գիշերով, ծածուկ,

10 Ս.Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, էջ 157:

11 Մ.Նալբանդյան, Հրապարակախոսական երկեր, Երևան, 1979, էջ 461:

խորհրդական առանձնության մեջ բողոքել, երբ ոչ ոք չէր լսում նորա բողոքը...»¹²:

«Հացի խնդիր» վեպում սոցիալական մոտիվը դառնում է առաջնային, և դրան մեծապես օգնում են հատկապես առատորեն օգտագործված առած-ասացվածքները:

Իր վեպի բավականին թվով վերնագրեր Պոռշյանը քաղել է ժողովրդական առած-ասացվածքներից: Թվարկենք դրանք՝ «Հեղնարն ու Հերիքնազը, կամ՝ «գող՝ սիրտը դող», «Ձվածեղի խաթեր թավի պոչը կպաչեն», «Պատիկա ու ճստիկա», «Արևը վատ տեղն էր մեր մտել», «Քարն էլ ա իրենց ձեռին, պոպոքն էլ», «Երկաթը տաք-տաք կծեծեն», «Ղոնաղն Աստծունն ա», «Հարսանիքն ու մահենիքն ախպեր են», «Առաջնորդը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում»: Առած-ասացվածքները կան նաև վեպի շարադրանքի մեջ: Դրանցից մեկը հատկապես բացառիկ է՝ այն բնորոշում է Միկիտան Սաքոյին. «...մեր զալում լակոտը մոր կոճակ կտրող է եղել, աչքի սուրմա թոցնող»¹³: Աչքի սուրմա թոցնելը գրեթե անհնար է, սակայն հասկանալի, որ անհնարինը Սաքոն դարձնում էր հնարավոր, մոր կոճակ կտրելը մեր օրերի մարդուն հայտնի լինել չի կարող: Հնում կանայք իրենց զգեստի տակ ունեցել են փեշ, որի վրա եղել է կոճկվող գրպան, որում պահել են իրենց ամենաթանկագին պահուստը: Պարզ է՝ զգեստի տակից որևէ բան թոցնելը ևս գրեթե անհնար է, սակայն այդ հնարավոր էր միայն Սաքոյի համար: Սաքոն չունի ո՛չ ազգային, ո՛չ կրոնական և ո՛չ էլ մարդկային որևէ սրբություն: Ուշադրություն դարձնենք «մոր կոճակ կտրել» արտահայտության վրա: Մայրը սրբություն է հաճախ նաև ավազակների համար, սակայն Սաքոն այդ զգացմունքից էլ զուրկ էր: Տասը-տասներկու տարեկանում Սաքոն քարշ էր գալիս զորանոցների գինեվաճառների դռներին, սակայն ոչ մի գինեվաճառ նրան երկար չէր պահում, որովհետև նա գինեվաճառի ծոցից կամ գլխատակից գիշերը քնած ժամանակ թոցնում էր քսակը: Սաքոն դժբախտացնում է շատերին և մնում անպատիժ:

Պոռշյանն իրավացիորեն պատկերում է, թե Սաքոնները չեն կործանվում. չարն ընդամենը փոխում է իր ձևերը: Վեպի վերջում նա դառնում է մոլլա և մեծ գյուղին շատ թշվառություններ պատճառում:

¹² Նույն տեղում, էջ 510:

¹³ Պ.Պոռշյան, Երկեր, էջ 41:

Ս.Սարինյանը Սաքոյի մնայնության գաղտնիքը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «...նա ոչ միայն մարմնավորում է իր դասի առօրյա գործելակերպը, այլև արտահայտում է նրա յուրօրինակ կենսափիլիսոփայությունը»¹⁴:

Չարի և չարիքի ավերածությունների կողքին XIX դարի 50-ական թվականներին հայ գյուղն ուներ նաև իր կենցաղավարության, սովորույթների, ավանդույթների, մարդկային հարաբերությունների գեղեցիկ կողմերը: Հայ գյուղացին գիտեր վաղնջական ժամանակներից եկող առասպելներ, ավանդություններ, որոնք պատմում էր դարեդար՝ մի սերնդից փոխանցելով մյուսին:

Պոռոշյանը մանկուց լսել էր բանահյուսական այդ ասքերը և դրանք տեղափոխել է իր վեպի մեջ: Առասպելներից մեկը կապվում է Այդր լճի հետ. այն պատմվում է «Այդր գյուղն ու Սև ջուրը» գլխում: Այս հատվածում իրար կողքի հայտնվում են երկու տարբեր դարաշրջանների առասպելացված հերոսներ՝ Հայաստանի առաջին քրիստոնյա արքա Տրդատ Մեծը և առավել մոտ դարերի ժողովրդական հերոս Քյոռօղլին: Պոռոշյանը հիմնալի հիշում էր Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանը, որում Քյոռօղլին ներկայացվում է որպես հայ¹⁵:

Պոռոշյանն ասում է, թե Այդր լճի պատմությունը իրեն ավանդել է հանգուցյալ հայրը՝ վսեմ ու ազդու բառերով: Ազաթանգեղոսի պատմության մեջ եղած Տրդատ Մեծի խոզ դառնալու պատմությունը, կտրելով դարերի պատմեցները, չորրորդ դարից հասել է մինչև XIX դար: Հետաքրքիր է, որ անգամ խոզի կերպարանք ստացած Տրդատը որպես թանկ կերպար է մնացել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ, նույնիսկ հիշատակվում է, թե մարդկային կերպար ստացած և արդեն քրիստոնյա դարձած Տրդատի մի ականջը մնում է խոզի:

Արամ Ղանալանյանը իր «Ավանդապատում» գրքում պատմում է Տրդատի մասին պատմող հետևյալ ավանդապատումը. «Հայոց Տրդատ թագավորը Գրիգոր Լուսավորչին չարչարելու պատճառով խոզ է դառնում և ընկնում սարերը: Մահվանից հետո նրա հոգին մտնում է վարազի մեջ և շրջում է սարերում, մինչև վերջին դատաստանի օրը: Ասում են, թե վարազին սպանելը մեղք է, որովհետև դրա-

14 Հայ նոր գրականության պատմություն, հ.III, էջ 243:

15 Խ.Աբովյան, Վերք Հայաստանի, Ողբ հայրենասերի, Երևան, 2004, էջ 64:

նով սպանած կլինես Տրդատ թագավորին: Մեղք է նաև խոզի միս ուտելը, որովհետև դրանով կերած կլինես Տրդատի միսը»¹⁶:

Արամ Ղանալանյանը «Պոռշյանը և հայ ժողովրդական բանահյուսությունը» գրքում բառացի «Հացի խնդիր» վեպից դուրս բերված առած-ասացվածքներից զետեղել է երկու ավանդություն-գրույց: Դրանք են՝ «Խառատ Մուրադը և Քյոռօղլու ղուաթը» և «Արագածի կատարի լճի և Այլը գյուղի ջրերի մեջ եղած կապը»¹⁷:

Քյոռօղլու և Մուրադի հանդիպման պատմությունը իսկական հրաշապատում հեքիաթ է: Հյուսն Մուրադը փայտից տասը-տասն-հինգ ուղտեր է սարքում, դրանց վրա Կողբի աղ է բեռնում և փայտե քարավանի առաջին ուղտի սանձը բռնած քայլում էր ձանապարհով, երբ հանկարծ տեսնում է Քյոռօղլուն և նրա կտրիճներին: Նա վախից քանդում է ուղտերին և դրանց վերածում փայտերի կույտի, ու ինքը թաքնվում եղեգների մեջ: Քյոռօղլին, որ նկատել էր ուղտերի քարավանը և հիմա տեսնում էր փայտերի կույտը, իր մարդկանց միջոցով գտնում է հնարագետ վարպետին: Նա չի պատժում վարպետին, ընդհակառակը գովում է նրան, և վերջինս պատմում է այդը ձիու պատմությունը, որը դուրս էր եկել լճի ջրերի հատակից:

Երկրորդ ավանդապատումը ներկայացնում է Այլը լճի և Արագած լեռան կապը, որը բացահայտել է մի հովիվ:

Ըստ հեղինակի հոր պատմածի՝ Այլը լիճը սովորական ջուր չի, այն լի է հրեղեն ձիերով, սպիտակ հրեղեն գոմեշներով, թևավոր ձիերով, մարդաձկներով և շատ ուրիշ գազաններով: Սա իսկական հրաշապատում հեքիաթի հատված է, որ տեղ է գտել Պոռշյանի «Հացի խնդիր» վեպում: Այս հատվածը հիշեցնում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի այն մասը, որում լուսամիտ փիլիսոփան ծաղրում է հինգերորդ դարի հայ իրականության մեջ եղած նման գրույցները. «Մեկն ասում է, թե՝ «Մեր գյուղում ծովացույլը կով ծնեց, և մենք բոլորս շարունակ լսում ենք նրա գոռոցը»: Մի ուրիշն էլ ասում է՝ «Հենց պայր ես աչքովս տեսել եմ»¹⁸:

«Սոս և Վարդիթեր» վեպից հետո «Հացի խնդիր» վեպում լայն աս-

16 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 125:

17 Ա. Ղանալանյան, Պոռշյանը և ժողովրդական բանահյուսությունը, էջ 65-67:

18 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 78:

պարեզ է տրված ազգագրական նյութերին, որոնք լի են բանահյուսական մեկնություններով:

Այս վեպում էլ շարունակվում է խաչատուր Աբովյանի և մեր ազգային էպոսի՝ «Սասնա ծռերի» այն միտումը, թե հայ կանայք չափազանց նվիրված են իրենց ընտանիքներին և ունեն բազմաթիվ շնորհքներ:

Ազգագրական, բանահյուսական արժեք ունեն «Բերանփակեք», «Բարեկենդան կամ բաշիքյարթմա», «Ճլորթի», «Դրիջակ» գլուխները:

«Դրիջակ» գլխում Պոռշյանն օգտագործում է ժողովրդական մի առած՝ «Փողը օխտը տուն ա պահում»: Դրիջակը երկու հարևանների տների պատերի միջև բացված փոքրիկ պատուհան էր, որն իրականում միմյանց հասնելու շտապ օգնության դեր էր կատարում: Այն նահապետական հայ գյուղացու բարոյական սրբության յուրօրինակ առհավատյան էր:

Պոռշյանը ցավով նկատում է, թե ինչպես դրացու նկատմամբ ունեցած նվիրվածությունն ու հոգատարությունը աստիճանաբար սկսում է վերանալ, և մարդը դառնում է եսակենտրոն. «Նահապետական պարզ սովորություններն օրըստօրե անհետանում են, բարեկամություն, հարևանություն սուրբ բառերն իրանց նշանակությունը միմիայն քաղաքավարության ձևերի մեջ են պահում. էլ չկա այն ընտանեկան կապը, որ օտարներին միմյանց հետ մի տան պես պահում էր, խոր գյուղերումը, որպես և իցե, այժմ կտեսնես նախկին **քաղցրության ստվերը**, իսկ քաղաքներումն ու մեծամեծ գյուղերումը՝ երբեք: Մի անմխիթար ապագա է գուշակում մեզ այս բանը»¹⁹:

Ուշագրավ է, որոշ առած-ասացվածքներ նույն վեպում Պոռշյանն օգտագործում է տարբեր բանաձևումներով: Օրինակ՝

Թուղթն էլ ա ձեռին, կալամն էլ:

Քարն էլ ա իրանց ձեռին, պոպոքն էլ:

Որոշ առած-ասացվածքներ, որոնք կրկնվում են «Հացի խնդիր» վեպում, այսօր էլ առօրեական են թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում՝

Աղջիկը որ կա, անկտրիլ ձմերուկ ա:

Աչքիդ վերեն ունք կա:

Ավել թիքեն փոր չի ծակի:

Գեղ կանգնի, գերան կկտտի:

19 Պ. Պոռշյան, Երկեր, էջ 126:

Ես ուղտն ամենքի դռանն էլ չոքելու է:

Կամ աղն է պակաս, կամ մաղը:

Անհավատ բանին մի՛ հավատալ:

Այս վերջինին նույնությամբ հանդիպում ենք Առաքել Բաղիշեցու «Տաղ Յովասափու» քերթվածում.

Ասաց, թե.-*Անավատ բանից մի ատար,*

Եւ յայն տեղն, որ չհասնիս, ձեռօք մի ձգտար,

Զանցեալ բանն, որ գնաց, զայն մի ավստսար,

*Ի միտ առ զխրատս և մի՛ մոռնար*²⁰:

Հիշենք, թե Պոռշյանն ինչպես էր շեշտում, թե իր հայրն այս կամ այն ժողովրդական ավանդությունը պատմում էր վսեմ ոճով: Վսեմը կլասիցիզմի դասական պահանջն է, մի պահանջ, որը ենթադրում է սրբազանություն: Պոռշյանն էլ հայ ժողովրդի դարավոր իմաստությամբ ջանում է կրթել իր ժամանակակիցներին և պարտադրում է, որ հայերի հետագա սերունդները պահպանեն ազգային լավագույն գծերը:

Բանալի բառեր. - Պերձ Պոռշյան, «Հացի խնդիր», բանահյուսություն, առած-ասացվածք, առասպել, ավանդություն, ժողովրդական, ազգային:

20 Առաքել Բաղիշեցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Արշալույս Ղազինյանի, Երևան, 1971, էջ 262-263:

Аэлита Долуханян
**РОМАН «ИЗ-ЗА ХЛЕБА» П. ПРОШЯНА, КАК КЛАДЕЗЬ
ФОЛЬКЛОРНОГО ЖАНРА**

Резюме

Несомненно, что роман «Из-за хлеба» Перча Прошяна является шедевром, и даже сегодня, через 137 лет после издания (1880 г.), он звучит актуально.

Перч Прошян - первый армянский писатель, о связи творчества которого с фольклором написал Арам Ганалаян. Он писал обо всех романах Прошяна, а, рассматривая роман «Из-за хлеба», он не обособил все жанры, использованные писателем.

Прошян еще с детства слышал целый ряд сказов и перенёс их в свой роман.

Интересно, что в одном и том же романе Прошян использует некоторые пословицы и поговорки в разных формулировках. Некоторые пословицы и поговорки, повторяющиеся в романе «Из-за хлеба», и сейчас используются и в разговорной и в письменной речи.

В романе «Из-за хлеба» встречаются многочисленные народные традиции и сказания.

Прошян отмечал, что его отец рассказывал разные народные традиции с большим пафосом. Пафос является классическим требованием классицизма, требование, которое предполагает священность. Прошян стремится воспитать своих современников в духе вековой мудрости армянского народа и требует, чтобы следующие поколения сохраняли лучшие национальные черты.

Aelita Dolukhanyan
**THE NOVEL THE MATTER OF DAILY BREAD BY PERCH PROSHIAN AS A
TREASURY OF THE FOLKLORE GENRE**

Summary

It is beyond any doubt that the novel *The Matter of Daily Bread* by Perch Proshian is a masterpiece, and even now, 137 years after its publication (1880), it remains topical.

Perch Proshian is the first Armenian writer who was mentioned by Aram Ghanalanian for the ties of his works with folklore. He wrote about all Proshian's novels, but discussing *The Matter of Daily Bread* he did not separate all the genres the writer used.

From his childhood, Proshian heard a lot of legends and transferred them to his novel.

It is interesting to note that in a single novel Proshian used some proverbs and sayings in diverse formulations. Some proverbs and sayings repeated in *The Matter of Daily Bread* by Proshian are used even now in oral and written speech.

In *The Matter of Daily Bread*, one can find numerous folk traditions and tales.

Proshian mentioned that his father used to tell various folk traditions with great pathos. Pathos is the classical requirement of classicism, a requirement assuming sacredness. Proshian strives to educate his contemporaries in the spirit of Armenian secular wisdom and demands that future generations preserve the best national traits.